ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 28.03.2018թ. հ.Ե-1/216 գրության, տեղեկացվում է.

Երևան համայնքը, որպես տեղական ինքնակառավարման մարմին, իր իրավասության շրջանակում իրականացնում է արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ՝ ապահովելով կրթական հաստատություններում երեխաների և աշխատողների ապահովությունը: ՀՀ օրենքներով սահմանված՝ հրդեհային, տեխնիկական, սեյսմիկ անվտանգության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովմանն ուղղված կանոնների և պահանջների կատարման նպատակով կրթական հաստատություններում իրականացվում է կանխարգելման և քաղաքացիական պաշտպանության քարոզչություն: Ըստ սահմանված ժամանակացույցի՝ ՀՀ ԱԻՆ հետ իրականացվում են վարժանքներ: Մանկապարտեզների և դպրոցների տնօրենների, ինչպես նաև պատասխանատուների և ծնողների համար ՀՀ ԱԻՆ համագործակցությամբ կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ: Հաստատություններում առկա են արտակարգ իրավիճակների դեպքում մարդկանց տարհանման պլանները, որոնք տեղադրված են համապատասխան վայրերում, ինչպես նաև հակահրդեհային և տեխնիկական անվտանգության կոլեկտիվ ու անհատական պաշտպանիչ միջոցներ, կրակմարիչներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ